

Ունինք ազուռ բառը, բայց ոչ ազուռեյի, գէթ գործածուած չէ մեր ձեռագիրներուն մէջ, և ՆՆԲ-ը իր բառերուն շարքին մէջ անցուցած չէ զայն:

Խնդիրը սակայն ատիկա չէ. այլ թէ Ռոշքեան այդ բառը ստեղծած է սխալ ընթերցումով Աստուածաշունչի մէկ տողին՝ որ իրականութիւնն է այգորեյի:

Եւ ուելի զուարճալին այն է՝ որ ինքը Այգորեյի բառը կը համարի սխալ. մինչդեռ ՆՆԲ-ը զայն արդարացնելու համար կը բերէ վկայութիւններ Փաւստոս Բիւզանդացիէն: Կը թուի թէ Ռոշքեան ունեցած չէ ձեռքին տակ Բիւզանդի պատմութիւնը:

Ահաւասիկ խնդրոյ առարկայ տողը Եզրի Առաջին գրքէն (Գ. 13-15).

« Եւ յորժամ զարթեալ թագաւորն, առեալ զգիրն զոր ետուն ցնա, կարդաց: Եւ առաքեալ կոչեաց զամենայն մեծամեծս պարսից և մարաց և գնախառարս և զսպարապետս և զտեղաղալս և զԻշխանս: Եւ նստեալ ի տեղոջ յայգորեյի, և կարդացին զգիրն առաջի ամենեցուն »:

Ի տեղոջ յայգորեյի, և ոչ թէ ազուռեյի՝ ինչպէս կարդացած է Ռոշքեան: ՆՆԲ-ը կը բացատրէ Այգորեյի բառը որպէս դահլիճ, հաւաքումի տեղ: Այս իմաստը ունի հոս, այս իմաստը ունի Բիւզանդի պատմութիւնէն մէջ բերուած վկայութիւնն ալ:

\* \* \*

Նկատմամբ այն բառերուն՝ որ անցած են Ռոշքեանէն ՆՆԲ-ին մէջ, անոնց թիւը չափազանց բիչ է, քանի որ հատուածներ մը միայն տեսած են անկէ:

Այդ բառերէն է օր. Լաստեկի, որուն վկայութիւնն ալ առնուած է նոյնութեամբ: Ըստ ՆՆԲ-ի Լաստեկի կը նշանակէ փայտ կամ տախտակ՝ լաստեր շինելու յարմար: Իսկ Ռոշքեանի համաձայն լաստեկի կը նշանակէ ջրալից տեղեր աճող այն ծառը, որուն փայտէն լաստ կը շինուի: Վկայութիւնը, զոր կը բերէ Ռոշքեան, առնուած

է Աշխ. Ժ. (հաւանարար Աշխարհագրութեան զիրք մը, որ անձանօթ մնացած է յաջորդ շրջանի բանասէրներուն, ինչպէս Երից վարդապետոց): Իմաստի այս թեմէ տարբերութիւնը որ կայ ընդ մէջ ՆՆԲ-ին և Ռոշքեանի, կը մնայ բացատրելի: Հասոգիչ կ'երեւի Ռոշքեանի տուած իմաստը, մանաւանդ որ ծառերու հայկ. անունները ընդհանրապէս ճիշդ վերջաւորութեամբ կ'ըլլան, ինչպէս տանձենի, խնձորենի, մորենի, ձիթենի, բայց կան նաեւ անոր հակառակ օրինակներ, ինչպէս նոճի, եղևին, շոճի, սօսի, եւն:

ՆՆԲ-ը չէ ուզած կուրօրէն հետեւիլ Ռոշքեանի տուած մեկնութեան, և անշուշտ այս շեղումին մէջ ունեցած է իր տեսակէտը: Աճառեան իր Արմատական Բառարանին մէջ առանձին բառ չի նշանակիր Լաստեկին, այլ կը կապէ լաստ-ին հետ. և լաստեկին ալ ենթադրաբար կը համարի « մի տեսակ ծառ, *Alnus orientalis* »: Լաստ արմատը կը համարի առաջ եկած հնդեւրոպական նախալեզուէն և լիթուաներէնի ու հին բրուսերէնի մէջ եւս կը գտնէ նոյն ձայնը: Լաստ իր նախնական իմաստով կը նշանակէ կոճղ, փայտի կտոր, որմէ կ'աւելցնէ ունինք լաստել բայն ալ, որ ըստ ՆՆԲ-ի լծորդ է պատրաստելի հետ: Նախնեաց ըով գործածուած է Լաստել-ը այս իմաստով: ՆՆԲ-ը կը դնէ այսպէս.

ΙΝΟΥΣΤΕΙ, եցի.ն. (լծ. պատրաստել, և պ.արաստեկն), παρατάσσω, ττω. Instauro. Հաստել որպէս զլաստ. կառուցանել, հանդերձել, կազմել, կարգել: « Ի ջրաց զսատեղծիչն ստեղծ պատաստակօր, հասկահիւս լաստեալ բազմակին մանուածով ». Մագ. Ծէ: « Կառօք և կրիվարօք ճակատեցի, և լաստեցի իրբեւ զհոյր ի պատերազմ ». Երեմ. 2. 23: « Որոյ աւետարանն իսկ զաշխարհս ամենայն առ հասարակ լաստեաց. Ոսկ. ԹՏ. Ա. 1: « Եթէ Պօղոս զայսչափ վայրս լաստեաց,